նախագիծ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

…….2009թ  N……Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻԴՐՈԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻԴՐՈԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ «ՀԻԴՐՈԼՈԳ» ՆԱՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ  «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Թույլատրել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի կենտրոնի հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի կողմից 19.11.2004թ. N C 24866 Ա  մաքսային հայտարարագրով ներմուծված «Հիդրոլոգ» նավի նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետի երկարաձգումը՝  մինչև 15. 12. 2011 թվականը։

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻԴՐՈԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻԴՐՈԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ «ՀԻԴՐՈԼՈԳ» ՆԱՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի միջև 1993 թվականից գործող գիտական համագործակցության պայմանագրի շրջանակներում իրականացվում է «Սևանա լճի ժամանակակից էկոլոգիական վիճակի համատեղ հետազոտությունների» ծրագիրը: Այդ նպատակով Ռուսաստանի Դաշնության սեփականություն հանդիսացող «Հիդրոլոգ» նավը համատեղ օգտագործման նպատակով տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն: Համաձայն երկու ակադեմիաների միջև 2008 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված լրացուցիչ պայմանագրի՝ համատեղ հետազոտությունները պետք է շարունակվեն ևս երեք տարի, իսկ «Հիդրոլոգ» նավի նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետը լրանում է 2009 թվականի մայիսի 20-ին: Կարևորելով վերոնշյալ ծրագրի իրականացման հետագա ընթացքը, անհրաժեշտ ենք համարում «Հիդրոլոգ» նավի նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմը երկարացնել ևս երեք տարով: